Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 24-ի նիստի N 36
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

# ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐԱԿՏԻ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2017-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառումը (գործողությունները) | Կատարման ժամկետները | Պատասխանատու մարմինը | Ֆինանսավորման աղբյուրը | Ակնկալվող արդյունքը | Վերստուգելի չափանիշը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| *I. Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերի առավելագույնը 3000 շահառուների կատարակտի վիրահատությունների իրականացում* | | | | | | |
| 1. | Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0» միավորից բարձր՝ մինչև 30.00-ը ներառյալ անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝ 60 տարեկան և ավելի բարձր տարիքի անդամներին կատարակտի վիրահատությունների իրականացում | 2017-2018 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն | Յուրաքանչյուր տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Առողջապահություն» բաժնի «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր | Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող կատարակտ հիվանդությունով տառապող հիվանդների բժշկական օգնության կազմակերպում Կուրության կանխարգելում, շարունակական հսկողություն | Ըստ դիմելիության՝ վիրահատված անձանց քանակ |
| 2. | «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով մանկավարժական աշխատող և ուսուցիչ հանդիսացող և ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման N 4 հավելվածով հաստատված «ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկում» ընդգրված պաշտոն զբաղեցրած կամ զբաղեցնող, սոցիալական փաթեթի շահառու չհանդիսացող, մասնագիտական գործունեության առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժի առկայությամբ, 60 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց կատարակտի վիրահատությունների իրականացում | 2017-2018 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն | Յուրաքանչյուր տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Առողջապահություն» բաժնի «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր | Կուրության կանխարգելում սոցիալական հատուկ նշանակություն ունեցող կատարակտ հիվանդությունով տառապող հիվանդների բժշկական օգնության կազմակերպում, շարունակական հսկողություն | Ըստ դիմելիության՝ վիրահատված անձանց քանակ |

QaxvackENX299

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գիտամանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմի, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմում ընդգրկված դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ հանդիսացող, մասնագիտական գործունեության առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժի առկայությամբ, 60 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց կատարակտի վիրահատությունների իրականացում | 2017-2018 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն | Յուրաքանչյուր տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Առողջապահություն» բաժնի «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր | Կուրության կանխարգելում՝ սոցիալական հատուկ նշանակություն ունեցող կատարակտ հիվանդությունով տառապող հիվանդների բժշկական օգնության կազմակերպում, շարունակական հսկողություն | Ըստ դիմելիության՝ վիրահատված անձանց քանակ |
| 4. | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ըդ հոդվածի 6-րդ մասով բուժաշխատող (ավագ, միջին և կրտսեր բուժաշխատողներ) հանդիսացող և առողջապահության բնագավառում աշխատող կամ աշխատած, գործունեության առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժի առկայությամբ, 60 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց կատարակտի վիրահատությունների իրականացում | 2017-2018 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն | Յուրաքանչյուր տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Առողջապահություն» բաժնի «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր | Կուրության կանխարգելում՝ սոցիալական հատուկ նշանակություն ունեցող կատարակտ հիվանդությունով տառապող հիվանդների բժշկական օգնության կազմակերպում, շարունակական հսկողություն | Ըստ դիմելիության՝ վիրահատված անձանց քանակ |
| 5. | ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետով հաստատված մշակույթի ոլորտի պետական կազմակերպություններում, «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում աշխատող կամ աշխատած՝ սոցիալական փաթեթի շահառու չհանդիսացող, ինչպես նաև Հայաստանի կինեմատոգրաֆիստների, նկարիչների, գրողների, թատերական գործիչների, կոմպոզիտորների միություններում անդամագրված, մասնագիտական | 2017-2018 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն | Յուրաքանչյուր տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Առողջապահություն» բաժնի «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին | Կուրության կանխարգելում՝ սոցիալական հատուկ նշանակություն ունեցող կատարակտ հիվանդությունով տառապող հիվանդների | Ըստ դիմելիության՝ վիրահատված անձանց քանակ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | գործունեության առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժի առկայությամբ, 60 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց կատարակտի վիրահատությունների իրականացում | | | բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր | բժշկական օգնության կազմակերպում, շարունակական հսկողություն | |
| *II. Կուրության կանխարգելման միջոցառումների ծրագրի կազմակերպաիրավական ապահովում* | | | | | | |
| 1. | Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերին իրականացվող կատարակտի վիրահատությունների 2017-2018 թվականների նպատակային ծրագիրն իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկի հաստատում | 2017 թ. երրորդ եռամսյակ | ՀՀ առողջապահության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջում: | Ծրագրի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի ընդունում |
| 2. | Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերին իրականացվող կատարակտի վիրահատությունների 2017-2018 թվականների նպատակային ծրագրի իրականացման գործունեության ընթացակարգերի հաստատում | 2017 թ. երրորդ եռամսյակ | ՀՀ առողջապահության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջում: | Ծրագրի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի ընդունում |
| 3. | Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերին իրականացվող կատարակտի վիրահատությունների 2017-2018 թվականների նպատակային ծրագրի շրջանակներում բժշկական օգնության ու սպասարկման գների հաստատում | 2017 թ. երրորդ եռամսյակ | ՀՀ առողջապահության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջում: | Ծառայություն-ների գնի հաստատում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի ընդունում |
| 4. | Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերին իրականացվող կատարակտի վիրահատությունների 2017-2018 թվականների նպատակային ծրագրի շրջանակներում բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող կազմակերպությունների յուրաքանչյուր տարվա չափաքանակների հաստատում | 2017 թ. երրորդ եռամսյակ | ՀՀ առողջապահության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջում: | Ծրագրի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպում | Հայաստանի Հանրապետութ-յան առողջապահութ-յան նախարարի հրամանի ընդունում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերին իրականացվող կատարակտի վիրահատությունների 2017-2018 թվականների նպատակային ծրագրի շրջանակներում բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում | 2017-2018 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջում: | Ծրագրի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում | Պայմանագրերի կնքում |
| 6. | Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերին իրականացվող կատարակտի վիրահատությունների 2017-2018 թվականների նպատակային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով | 2017-2018 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջում: | Ծրագրի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման աշխատանքների վերլուծություն | Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ներանցում էլեկտրոնային առողջապահական համակարգ |
| 7. | Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերին իրականացվող կատարակտի վիրահատությունների 2017-2018 թվականների նպատակային ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկում | 2017-2018 թթ. | ՀՀ առողջապահության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջում: | Ծրագրի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման հասանելիության և մատչելիության բարձրացում | Բնակչության շրջանում Ծրագրի վերաբերյալ իրազեկվածություն |